

Mémoire des Arméniens de France pour la Postérité



ԱՍՈՒՐԻ ՀԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱԻԱՏՈՑ ԴԱԻԱՆՈՒԹԻՒՆԸ

Քրիստոնեությունը տարածուած է իր առաքեալներու միջոցաւ եւ ընդդիմութիւններ ունեցած է այլ ազգի կրօնքներու հետ:

Քրիստոնեական կրօնքի տիրապետող հատուածը կաթողիկոսական գանգուածն է, որուն գագաթը կանգնած է Պապը որպէս ժառանգորդ եւ հաստատուած Վատիկանի պալատին մէջ:

Քրիստոնեական կրօնքի մաս կը կազմեն նաեւ Աւետարանական, Առաքելական եւ Ուղղափառ եկեղեցիները:

Հայաստան հեթանոսական շրջանին Աբգար թագաւորը ախտէ մը վարակուած ու անբուժելի դարձած էր. կ'աղերսէ Քրիստոսի, որ հրաշքներ գործէ իր քարոզչութիւններով: Թագաւորը կը ստանայ Թադէոս եւ Բարթողիմէոս առաքեալներու քրիստոնեական պատգամը ու կը վերագտնէ իր առողջական կենցաղը: Բուժուած Աբգար թագաւորը քրիստոնեայ կը դառնայ. բայց իր մահէն վերջ հեթանոսական արշաւը ալ աւելի կը սաստկանայ: Քրիստոնեությունը ընկալած Մուրբ Գրիգոր Լուսաւորիչ կը կալանուի Խոր Վիրապի մութ կլիբին մէջ եւ տարիներ յետոյ դուրս կը հանուի հրաշքով ողջ ու կենսունակ վիճակով: Շատ հաւանական է, որ քրիստոնեայ հաւատացեալներ գաղտնի կերպով ապահոված էին Ս. Գրիգոր Լուսաւորիչի ուտեստեղենի մատակարարութիւնը:

Հայաստանի իշխանութիւնը 301թ. Տրդատ Գ. Թագաւորի ¹ հովանաւորութեամբ քրիստոնեությունը կը հռչակէ Հայաստանի Ազգային Կրօնք:

Հետեւաբար Հայաստան կը դառնայ Աշխարհի առաջին քրիստոնեայ երկիրը:

Երկրին քրիստոնեական վարչակազմը մեծ դժուարութիւններու հանդիպած էր ժողովուրդը նոր եկեղեցիներու մէջ համակելու համար. Այս հարցի լուծումն ալ ապահովուեցաւ քանդելով հեթանոսական մեհեանները որանց խարիսխը ծառայեց որպէս հիմ նորակառոյց Հայ Առաքելական եկեղեցիներու: Ս. Էջմիածինի Մայր Տաճարը հեթանոսական մեհեանի խարիսխի վրայ է, որ կանգուն կը մնայ:

Ցաւալի է հեթանոսական մեհեաններէն միայն Գառնիի Տաճարն է, որ մնացած է որպէս պատմական նմոյշ:

Ընդհանուր Հայ ժողովուրդին 90%ը լուսաւորչական անուանուած Առաքելական եկեղեցոյ զաւակներ են: Մնացեալները Կաթողիկէ եկեղեցոյ ու Աւետարանական Բողոքական եկեղեցոյ զաւակներ են:

Հայ Առաքելական եկեղեցին կախեալ է Հայրապետէ մը, որ Կաթողիկոս կ'անուանուի եւ կայք հաստատած է Հայաստանի մայրաքաղաք Երեւանի շրջակայ Էջմիածինի հայրապետանոցին մէջ:

Mémoire des Arméniens de France pour la Postérité

Հայ Առաքելական եկեղեցւոյ կազմի հակիրճ դասաւորումը հետեւեալն է: Քահանայ, Prêtre marié, Աբեղայ Prêtre célibataire: Կուսակրօս արեղան եթէ թէզ գրէ կըրնայ դառնալ վարդապետ, Վարդապետ, Docteur en théologie (maître), Եպիսկոպոս Évêque, Արքեպիսկոպոս Archeveque Պատրիարք Patriarche եւ Կաթողիկոս Catholicos: Չենք յիշատակեր նաեւ աստիճանաւոր կղերականներ որոնք ստուար զանգուած մը կը ներկայացնեն: Յիշենք նաեւ Աստուածաբանական համալսարանի եւ Ճեմարանի ուսանողները որոնք կոչում ունին բարձր պաշտօններու յետաւարտ ուսումներու:

Վերոյիշեալ կղերական դասու պատկանող քահանան է, որ միայն ամուսնացած եւ ընտանիք կազմած է, կինը կ'անուանուի երէցկին: Քահանան միայն երէցկնոջ վախճանումէն յետոյ է, որ վարդապետի պաշտօնին կրնայ տիրանալ եւ կը կոչուի շուշտակ վարդապետ: Բարձրաստիճան կղերականներու մայրերն ալ կ'անուանուին Տիրամայր:

Աստուածաբանութիւն ուսանող երիտասարդ մը նախ եւ առաջ մարդ մըն է տիրապետող իր բոլոր զգայարանքներուն եւ մարդկային կենդանական (Vitale) պահանջներուն. ան կրնայ սանձել կարգ մը մոլութիւններ, պահանջներ եւլն, բայց ամէն բանէ առաջ մարդ մըն է նշուակ դարձած այլ եւ այլ սայթաքումներու: Մենք կը խորհինք թէ հայ կղերական դասու ամուրիութիւնը երբ օժտուի ամուսնութեամբ մը հայ քահանաներու նման, կրնայ սատար հանդիսանալ կրօնքի պահպանման եւ մշակութային ու ազգայի զարգացման:

Նախօլէն Իտալիոյ մէջ երբ հալածած է քաղաքականացված Կաթոլիկ եկեղեցիները միայն պաշտպան հանդիսացած է Վենետիկի Հայ Մխիթարեան կառոյցին նկատի ունենալով, որ ան մշակութային բարձր կեդրոն մըն է:

Մեր այս առաջարկը, որ կը յղենք հանրութեանը կրնայ վերացնել Աշխարհի վրայ ջնջելով անբարոյական պատահարները, որոնք յաճախ տեղի կ'ունենան կղերական խաւերու մէջ:

Ներսէս Տուրման-Արապեան
Անթօնի 20 դեկտեմբեր 2019

¹ Ֆրանսայի Վերսայի Պալատի Ճեմապարտէզի մուտքին տեղադրուած Լուի xiv'ի արձանին մօտ կանգնուած է նաեւ հայազգի Տրդատ ու Տիգրան թագաւորներու արձանները